ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
Ն-45

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
«10» մարտ 2023թ.
N Ն-45 (Հ-45) 2023
Ուժի մեջ է մինչև՝ «07» փետրվար 2026 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «ՆԿՍԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին (Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի մարտի 10-ի N 476-Ա, հրաման) համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 028/S-046) N 1-A հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրի, ցուցանիշների և արտադրանքի բնութագրերը և նորմերը սահմանող նորմատիվ իրավական ակտի, համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված նմուշառման մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի:

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուր փողոց 6/5

էլ. հասցե: info@nksert.am; Հեռ. (+374 77) 99-95-57

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«ՆԿՍԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում է ստորև ներկայացված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերը՝

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված «Ցածր լարման սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 004/2011),
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 823 որոշմամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 010/2011),
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 825 որոշմամբ հաստատված «Պայթունավտանգ միջավայրերում աշխատանքի համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 012/2011),
4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 018/2011),
5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 879 որոշմամբ հաստատված «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 020/2011),
6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հուլիսի 2-ի N 41 որոշմամբ հաստատված «Ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 032/2013),
7. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված «Հրդեհային անվտանգության և հրդեհի մարման ապահովման միջոցների պահանջների մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 043/2017):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ * 02686920 * MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

3/31/2023

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

(ստորագրությունը)